



*Համարը N 1137-Ն*  
*Տիպը Որոշում*  
*Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2010.09.22/45(779) Հոդ.1043*  
*Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն*  
*Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ*  
*Վավերացնող մարմինը*  
*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 23.09.2010*

*Տեսակը Հիմնական*  
*Գարգավիճակը Գործում է*  
*Ընդունման վայրը Երևան*  
*Ընդունման ամսաթիվը 26.08.2010*  
*Ստորագրման ամսաթիվը 10.09.2010*  
*Վավերացման ամսաթիվը*  
*Ուժը կորցնելու ամսաթիվը*

**Գաղեր այլ փաստաթղթերի հետ**

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

26 օգոստոսի 2010 թվականի N 1137-Ն

**ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 878-Ն որոշմս կետով հաստատված ծրագրի «4.3.13 Արտակարգ իրավիճակների կանխարգելում» բաժնի 1-ին կետի 1.3-րդ ենթակետի և Հայաստան-ՆԱՏՕ անհատական գործընկերության գործողությունների ծրագրի կատարումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հաստատել Ճգնաժամային կառավարման կենտրոնի ստեղծման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Նախատեսվում է սույն որոշման 1-ին կետով հաստատված ծրագրի ֆինանսավորումն ստանալ Եվրամիությունից, ՆԱՏՕ Միացյալ ազգերի կազմակերպությունից, Առևտրի համաշխարհային կազմակերպությունից և այլ դոնորներից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**S. Սա**

2010 թ. սեպտեմբերի 10  
Երևան

Հավելված  
ՀՀ կառավարության 2010 թվականի  
օգոստոսի 26-ի N 1137-Ն որոշմս

**ԾՐԱԳԻՐ**

**ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ**

**1. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ**

1. Հայաստանի Հանրապետությունում արտակարգ իրավիճակների և ճգնաժամերի կառավարման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 2002 թվականին նախկին Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր արտակարգ իրավիճակների վարչության, ներկայումս՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակներ նախարարության Հայաստանի փրկարար ծառայության կազմում միջազգային փորձի հիման վրա ձևավորվեց ճգնաժամային կառավարման կենտրոն, որը մինչ այսօր իրականացնում է գործառնություններ, որոնք հիմնականում առնչվում են արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների սպասարկմանը, շահագրգիռ անձանց և ծառայություններին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրմանը, ինչպես նաև լուծում է իրազեկման և ազդարարման խնդիրներ: Միանշանակ, Կենտրոնն լուծում է կարևոր խնդիրներ և նրա դերը ոլորտում անփոխարինելի է, սակայն նման կառուցվածքով և տեխնիկական հագեցվածությամբ արտակարգ իրավիճակների և լուրջ ճգնաժամերի պարագայում այն իզոլորտ չէ նպատակաուղղված և արդյունավետ կառավարում իրականացնել. մարտավարական նշանակության որոշումների կայացման և դրանց իրագործում ապահովող օղակների միջև առկա են տեղեկատվական, կազմակերպչական և կառուցվածքային բազմաթիվ մակարդակներ, առկայությունը ճգնաժամի պարագայում օբյեկտիվորեն խոչընդոտելու են և որոշումների կայացման, և դրանց իրագործման գործընթացին:

2. Մշակվել և հաստատվել են աղետներին հակազդման բազմաթիվ պլաններ, ստեղծվել է ոլորտը կարգավորող որոշակի իրավական դաշտ, գործում է ճգնաժամային կառավարման կենտրոն, ակնհայտ է, որ տարաբնույթ ճգնաժամերի, արտակարգ իրավիճակների, աղետների առաջացման դեպքում հանրապետությունում՝ կենտրոնացված կառավարման հնարավորությունն ընձեռող հիմնական կառույցի բացակայությունը կառաջացնի լուրջ խնդիրներ և ստեղծված իրավիճակի գնահատման, և որոշումների կայացման, և հետևանքների վերացման գործընթացներում: Մասնավորապես՝

1) ցածր մակարդակի վրա է պետական կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, դրան գործող ծառայությունների միջև փոխհամագործակցության աստիճանը՝ արտակարգ իրավիճակներին, ճգնաժամերին պատրաստվածության գործում,

2) արտակարգ իրավիճակների, ճգնաժամերի առաջացման դեպքում կենտրոնացված կառավարման գործընթացների իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերը գտնվում են նախարարություններում, զերատեսչություններում, և մայրաքաղաքում, օրինակ՝ ավերիչ երկրաշարժի դեպքում, դրանց կորուստը այդ պարագայում հնարավոր է և անթույլատրելի:

3) ճգնաժամերի, արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում տեղեկատվության տրամադրումը շահագրգիռ առյաններին և անձանց իրականացվում է մեծամասնությամբ հեռախոսային կապով. վերջինիս հուսալիությունը կասկածելի հատկապես աղետների առաջացման դեպքում (որի փորձը մենք արդեն իսկ ունենք),

4) օպերատիվ տեղեկատվությունը մշակվում է անցնում կառավարման տարբեր օղակներում, քանի որ դրանց տրամադրում աղբյուրները կառավարման մակարդակներից կախված տարբեր են և երբեմն տարբերվում են միմյանցից կամ կրում իրար հս բնույթ. այս պատճառով առաջանում է տեղեկատվության ճշգրտման անհրաժեշտություն, ինչը ժամանակի ավելորդ կորուստ է:

5) առկա տեխնիկական միջոցները և տարածքը հնարավորություն չեն ընձեռում տեղեկատվության լայնածավալ ու արդի եղանակներով մշակում իրականացնել: Մասնաձևով են նաև դեպքի վայր մեկնող օպերատիվ խմբերի տեխնիկական հնարավորությունները, և որոշումների կայացման համար անհրաժեշտ տեղեկատվությունը փոխանցվում է հեռախոսակապի ռադիոկապի միջոցով: Բնականաբար, նման եղանակով անհնարին է աղետի, արտակարգ իրավիճակի մասին լիարժեք տվյալ տեղեկություններ փոխանցել՝ որոշում կայացնող անձին բացահայտելով ստեղծված իրավիճակը ողջ ծավալով.

6) ոլորտում օպերատիվ ծառայություն մատուցող ստորաբաժանումների միջև ընդհանրապես բացակայում է փոխհամագործակցությունը: Չեն իրականացվում հավաքներ, որոնց ժամանակ կարելի է առկա խնդիրների մասին քննարկում վերլուծություններ կատարել և դրանցից բխող որոշումներ ընդունել: Խնդիրն ակնառու է հատկապես արտակարգ դեպքերի, պատահարների դեպքում, որտեղ ներգրավված են լինում մի քանի ծառայություն,

7) նախարարություններում, այլ պետական մարմիններում, դրանց ենթակայության տակ գտնվող ուժերի և միջոցների, շինությունների, դրանց վիճակի և հնարավորությունների վերաբերյալ կենտրոնացված տեղեկատվական բազա ստեղծված չէ. տվյալները գտնվում են նշված մարմիններում, և որևէ ոլորտին առնչվող տվյալների անհրաժեշտության դեպքում առաջանում պաշտոնական նամակագրության անհրաժեշտություն:

3. Հաշվի առնելով վերոգրյալը, նոր ճգնաժամային կառավարման կենտրոնի ստեղծումը՝ սույն ծրագրով ներկայացվող տարբերակով թույլ է տալիս ոչ միայն լուծել վերոհիշյալ խնդիրները, այլ նոր հարթություն տեղափոխել ճգնաժամերի կառավարման գործընթացը՝ ապահովելով երկրում խաղաղ և պատերազմական ժամանակաշրջաններում, ինչպես նաև ահաբեկչության հետևանքով արտակարգ իրավիճակների կառավարման օպերատիվությունը, բնակչության պաշտպանության և քաղաքացիա պաշտպանության ոլորտում տեղեկատվության ժամանակակից եղանակներով արտացոլումը, պետական կառավարման մարմինների փոխհամաձայնեցված գործողությունների ապահովումը՝ արդյունքում նպաստելով կառավարման արդյունավետ բարձրացմանը:

4. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) ճգնաժամային կառավարման կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) Նախարարության ստորաբաժանում է, որն իրականացնում է Նախարարության, այլ շահագրգիռ նախարարությունների և զերատեսչությունների օպերատիվ-տեղեկատվական շուրջօրյա ապահովումը, արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում, քաղաքացիական պաշտպանության միջոցառումների անցկացման ժամանակ՝ ահազանգերի և տեղեկատվության ընդունումը, ազդարարման և արձագանքման կազմակերպումը, հետևանքների վերացման կառավարումը:

5. Կենտրոնին հանձնարարականներ և հրամաններ պետք է տրվեն Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակ

նախարարի (այսուհետ՝ Նախարար), Նախարարության Կենտրոնի պետի կողմից:

6. Կենտրոնի հաստիքացուցակը, անձնակազմի թվաքանակը պետք է հաստատվի Նախարարի կողմից:

**II. ԿԵՆՏՐՈՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

7. Ճգնաժամային կառավարման կենտրոնի նպատակներն են՝

1) խաղաղ և պատերազմական ժամանակաշրջաններում, ինչպես նաև ահաբեկչության հետևանքով արտակարգ իրավիճակ կառավարման օպերատիվության ապահովումը,

2) արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության վերաբերյալ տեղեկատվական գործընթացների կենտրոնացումը (ընդունում, մշակում, վերլուծություն, գնահատում, ամփոփում, հաղորդո պահպանում, փոխանակում), ինչպես նաև տեղեկատվության ժամանակակից եղանակներով օպերատիվ արտացոլումը,

3) բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության գործընթացի կառավարման արդյունավետութ. բարձրացումը,

4) բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կառավարման մարմինների փոխհամաձայնեց գործողությունների ապահովումը:

8. Ճգնաժամային կառավարման կենտրոնի խնդիրներն են.

1) մասնակցում է կառավարման մարմինների միջև արտակարգ իրավիճակների հարցերով միասնական տեղեկատվությս դաշտի ստեղծմանը,

2) արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների մեղմացման միջոցառումների պլանավորման և հսկողության մասնակցությունը,

3) արտակարգ իրավիճակների ռիսկերի վերաբերյալ տեղեկատվության ընդունումը, ռիսկերի գնահատումը, դրանց նվազ ուղղությամբ որոշումների ընդունումը,

4) արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների առաջացման դեպքում Նախարարության ուժերի արձագանքս ինչպես նաև այլ նախարարությունների և գերատեսչությունների ուժերի ներգրավման ու դրանց միջև փոխգործողությունների փոխհամագործակցության կազմակերպումը,

5) արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վայրերում հետախուզության և մոնիթորինգի կազմակերպումը իրավասության սահմաններում՝ իրականացումը,

6) բնակչության պաշտպանության բնագավառում մոնիտորինգային տվյալների ընդունում, հնարավոր հետևանքների կանխատեսում և մոդելավորումը,

7) խաղաղ և պատերազմական ժամանակաշրջաններում, ինչպես նաև ահաբեկչության հետևանքով առաջացած արտալ իրավիճակների կառավարման իրականացումը,

8) արտակարգ իրավիճակների և պատերազմների ծագման դեպքում փրկարարական, անհետաձգելի վթարավերականգն աշխատանքների, բնակչության կենսագործունեության ապահովման գործընթացի, ինչպես նաև մարդասիրական օգնության օպերատիվ ու արդյունավետ կառավարումը,

9) հանրապետությունում արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների վերլուծությունն ու վիճակագրության վ

10) տեղեկատվական բազաների, թվային քարտեզների ստեղծումը, դրանց արդիականացումը,

11) արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում, հնարավոր հետևանքների նվազեցման և քաղաքացիական պաշտպանության միջոցառումների անցկացման ժամանակ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև միջազգային պայմանագրերով նախատեսված ազդարարման իրականացումը,

12) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ գործառնություններ:

9. Ծրագրի իրականացման իրավական հիմքերն են՝

1) «Ռեզիստանտների իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,

2) «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,

3) «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ. 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 22-րդ հոդվածներ,

4) «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդված, 4-րդ հոդվածի եր պարբերության գ) կետ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ հոդվածներ,

5) «Մեյամիկ պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ, 8-րդ, 9-րդ, 13-րդ, 18-րդ հոդվածն

6) «Հայաստանի փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ հոդվածներ,

7) «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրե րդ, 18-րդ հոդվածներ,

8) «Պետական նյութական պահուստի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ, 13-րդ հոդվածներ:

**III. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

10. Կենտրոնի կազմում ընդգրկվում են՝ հետախուզության և մոնիթորինգի բաժինը, դիսպետչերական ծառայությունների գործունեությունը համակարգող բաժինը, վերլուծական և վիճակագրության բաժինը, ավտոմատացված համակարգերի, ծրագ

կապի ապահովման բաժինը, անվտանգության ապահովման բաժինը, տեխնիկական ապասարկման բաժինը, օպերատիվ հերթափոխերը և ղեկավարությունը:

11. Կենտրոնն ունի յոթ շարժական կառավարման կետ, որոնցից երկուսը նախատեսված են բարձր անցողության հրամանատարաշտաբային մեքենայի, մեկը՝ ուղղաթիռի, չորսը՝ բարձր անցողության մեքենայի բազայի վրա: Կառավարման կետերի կազմը և գործառույթները սահմանում է Նախարարը, Կենտրոնի պետը:

12. Կենտրոնում գործում է իրավիճակային դահլիճ, որը նախատեսված է արտակարգ իրավիճակների առաջացման և պատերազմների ծագման դեպքում օպերատիվ ու արդյունավետ կառավարում ապահովելու համար:

Կենտրոնի ընթացիկ օպերատիվ գործունեությունն ապահովում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակ նախարարությունը:

13. Իրավիճակային դահլիճում Հայաստանի Հանրապետության Նախագահի կամ Հայաստանի Հանրապետության վարչա ղեկավարությամբ աշխատում են հանրապետական գործադիր մարմինների, այլ պետական մարմինների ղեկավարները հետև կազմով՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարար, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարար, Հայաստանի Հանրապետ առողջապահության նախարար, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար, Հայաստանի Հանրապետ տրանսպորտի և կապի նախարար, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հայս Հանրապետության բնապահպանության նախարար, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարար, Հայս Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարար, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարար Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարար, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարար, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարար, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարար, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարար, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրեն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության տնօրեն, Հայաստանի Հանրապետության տարածքս կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միգրացիայի և փախստականների գործակալության պետ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետ, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահ (ձև N 1):

Օպերատիվ աշխատանքների կարող են իրավիճակ տարածքային կառավարման մարմինների ղեկավարներ և այլ գերատեսչությունների ղեկավարներ:

14. Ճգնաժամային կառավարման կենտրոնի գործառույթները բաժանվում են երկու խմբի՝

- 1) ամենօրյա աշխատակարգային գործառույթներ,
- 2) արտակարգ իրավիճակների պայմաններում իրականացվող գործառույթներ:

15. Ամենօրյա աշխատակարգային գործառույթներն ընդգրկում են՝

1) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված տվյալների բազաների ստեղծու դրանց մշտական ճշգրտում, ինչպես նաև դիսպետչերական ծառայություններից ստացված արտակարգ իրավիճակների, դեպ պատահարների մասին տեղեկատվության ընդունումը, մշակումը և դրանց վիճակագրության վարումը,

2) տարբեր իրավիճակների վերաբերյալ գեոինֆորմացիոն և այլ կառավարման ավտոմատացված համակարգերի մշակու ներդրումը,

3) կառավարման մարմինների համար շտաբային ուսումնավարժությունների անցկացումը (կառավարման մարմինների ուսուցում),

4) բնակչության իրազեկման ծրագրերի իրականացումը,

5) հանրապետությունում՝ ըստ ապասարկման ոլորտների, օպերատիվ իրավիճակի ներկայացումը (ներկայացուցիչների զեկույցներ՝ դեպքերի, պատահարների մասով) և քննարկումը,

6) համատեղ գործողությունների պլանավորումը, որոշումների նախապատրաստումը՝ արտակարգ իրավիճակների, դեպ պատահարների քանակի նվազեցմանը և հնարավոր հետևանքների մեղմացմանն ու նպատակաուղղված վերացմանը,

7) հաշվառում, վերլուծում, ամփոփում և սահմանված կարգով տրամադրում է տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների, ինչպես նաև վերջինների պատճառով առաջացած հետևանքների և դրանց վերացման աշխատանքների վերաբերյալ,

8) արտակարգ իրավիճակների առաջացման, սպառնալիքի, կանխման և կանխարգելման, բնակչության պաշտպանությու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ժամանակ կազմակերպում և իրականացում է Նախարարության ու Նախարարության ստորաբաժանումների ղեկավարության, պետական կառավարման մարմինների ղեկավարների ու բնակչության ազդարարումը, միջազգային պայմանագրերի շրջանակներում համապատասխան կազմակերպությունների իրազեկումը,

9) վերահսկում է դիսպետչերական կետերի, ծառայությունների գործունեությունը:

16. Արտակարգ իրավիճակների պայմաններում իրականացվող գործառույթներն ընդգրկում են կոնկրետ իրավիճակների և պատերազմի ծագման դեպքում օպերատիվ կառավարման բոլոր ուղղություններով գործունեությունները (ստեղծված իրավիճ պարզաբանում և հստակեցում, առնչվածության մասով ուժերի և միջոցների ներգրավման որոշումների ընդունում և գործընթ

ապահովում, հետևանքների վերացման գործընթացի կազմակերպում և իրականացման վերահսկում և այլն):

**IV. ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԿԱՀԱՎՈՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՌԱՋԱԴՐԱՆՔ**

**4.1. ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ՏԱՐԱԾՔԸ**

17. Ճգնաժամային կառավարման կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) պետք է գտնվի մայրաքաղաքի (կամ մայրաքաղաքի մոտակայքում) այնպիսի հատվածում, որտեղից առավելագույնս բարձրորակ ռադիո, հեռախոսային, համացանցի և արբանյուկայի հնարավորություն կստեղծվի, ինչպես նաև կապահովվի բազմակողմանի էլեկտրա- գազա- ջրամատակարարում՝ Կենտրոնի գործառնություններն ու պահանջներն ապահովելու համար:

18. Կենտրոնի տարածքը պետք է հնարավորություն ընձեռի ստորգետնյա (20) և բացօթյա (200) ավտոմեքենաների կայան համար: Ստորգետնյա ավտոկանգառը պետք է նախատեսվի անմիջապես շինության տակ, իսկ մոտեցումներն ապահովվեն էլ շինության ներսից՝ վերելակով և աստիճանավանդակով՝ երկկողմանի: Բացօթյա ավտոկանգառները պետք է նախագծվեն շինության թիկունքային հատվածում (100 ավտոմեքենայի)՝ շինությունից առնվազն 30 մ հեռավորության վրա և Կենտրոնի տարածքից դուրս՝ հսկիչ անցագրային կետի ճակատային մասում (100 ավտոմեքենայի):

19. Կենտրոնի տարածքը պետք է սահմանափակված լինի պաշտպանիչ պարիսպով, որը պետք է կառուցվի Կենտրոնի շտաբային շտաբի կողմի վրա ոչ պակաս, քան 30 մ հեռավորության վրա: Պարսպի բարձրությունը պետք է հաշվարկվի տեղանքի առանձնահատկություններով պայմանավորված և պետք է ապահովի դրսից տեսադաշտի սահմանափակում մինչև երկրորդ մակարդակ: Բացօթյա ավտոկանգառը պետք է սահմանափակված լինի մետաղական ցանցով և արգելաձողով:

20. Կենտրոնի տարածքում՝ շինության նպատակահարմար կողմի վրա պետք է կահավորվի ուղղաթիռի վայրէջքի հարթ

**4.2. ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ**

21. Կենտրոնը նպատակահարմար է կահավորել նորակառույց, բարձր սեյսմակայունությամբ 4 հարկանի քառանկյունի շինությունում, որի նկուղային հատվածում հնարավոր կլինի նախատեսել նաև երկհարկանի բունկեր:

22. Կենտրոնում պետք է կահավորվեն հետևյալ աշխատանքային և օժանդակ տարածքները՝

- 1) խորհրդակցությունների դահլիճ,
- 2) իրավիճակային դահլիճ,
- 3) հանդիսասրահ,
- 4) Կենտրոնի պետի աշխատասենյակ,
- 5) Կենտրոնի պետի տեղակալների աշխատասենյակներ,
- 6) Կենտրոնական ահազանգման կենտրոնի (այսուհետ՝ ԿԱԿ) հերթապահության սենյակ,
- 7) ԿԱԿ պետի աշխատասենյակ,
- 8) ԿԱԿ պետի տեղակալի աշխատասենյակ,
- 9) Դիսպետչերական ծառայությունների գործունեությունը համակարգող բաժնի (այսուհետ՝ ԴԾԳՀԲ) աշխատասենյակ,
- 10) ԴԾԳՀԲ պետի աշխատասենյակ,
- 11) Վերլուծական և վիճակագրության բաժնի (այսուհետ՝ ՎՎԲ) աշխատասենյակ,
- 12) ՎՎԲ պետի աշխատասենյակ,
- 13) ավտոմատացված համակարգերի, ծրագրային և կապի ապահովման բաժնի (այսուհետ՝ ԱՀԾԱԿԲ) աշխատասենյակ,
- 14) ԱՀԾԱԿԲ պետի աշխատասենյակ,
- 15) Հետախուզության և մոնիտորինգի բաժնի (այսուհետ՝ ՀՄԲ) աշխատասենյակ,
- 16) ՀՄԲ պետի աշխատասենյակ,
- 17) կապի հանգույց,
- 18) տեխնիկական և սպասարկման բաժնի (այսուհետ՝ ՏՄԲ) աշխատասենյակ,
- 19) ՏՄԲ պետի աշխատասենյակ,
- 20) վարորդների սենյակ,
- 21) հավաքարարների սենյակ,
- 22) հսկիչ անցագրային երկու կետ,
- 23) անվտանգության ապահովման բաժնի աշխատակիցների սենյակ,
- 24) հանգստի սենյակներ (Վարչապետի, ԱԻ նախարարի, նախարարների և գերատեսչության պետերի),
- 25) հանգստի սենյակներ (ԿԱԿ հերթապահ անձնակազմի, վարորդների, անվտանգության աշխատակիցների),
- 26) ճաշարան,
- 27) հանդերձարան,
- 28) մարզադահլիճ,
- 29) լողավազան,
- 30) բուժկետ,
- 31) լվացքատուն,

- 32) սանհանգույցներ,
- 33) լոգարաններ,
- 34) գեներատորների կետ (բունկերում և դրսում),
- 35) ՎՔՆ պահեստավորման և SU լիցքավորման կետ,
- 36) պահեստներ (դրսում և բունկերում),
- 37) ջրաջեռուցման սենյակ,
- 38) բունկեր:

23. Շինության առաջին հարկում պետք է գտնվեն անվտանգության աշխատակիցների սենյակը, վարորդների սենյակը, հանդերձարանը, Կենտրոնական ահազանգման կենտրոնը, ԴԾԳՀ բաժինը, SU բաժինը, բուժկետը, հաշվապահի սենյակը, վարորդների, անվտանգության աշխատակիցների և ահազանգման կենտրոնի անձնակազմի հանգստի սենյակները, հավաքարարների սենյակը, երկու սանհանգույց և երկու լոգարան:

24. Շինության երկրորդ հարկում պետք է գտնվեն խորհրդակցությունների դահլիճը, իրավիճակային դահլիճը, ԱՀԾԱԿ Բ կապի հանգույցը, Կենտրոնի պետի և նրա տեղակալների աշխատասենյակները, երկու սանհանգույց և երկու լոգարան:

25. Շինության երրորդ հարկում պետք է գտնվեն հանդիսարանը, ՎՎ բաժինը, ՀՄԲ բաժինը, ճաշարանը, մարզադահլիճ երկու սանհանգույց և երկու լոգարան:

26. Չորրորդ հարկում պետք է գտնվեն Վարչապետի, նախարարների, ՀՀ ԱԲՆ ղեկավարության աշխատանքային (հանգ սենյակները (ներառվում է սանհանգույց, լոգարան, աշխատասենյակ, ննջասենյակ):

27. Շինության նկուղային 2 հարկերում պետք է գտնվեն բունկերը, լողավազանը, ջրաջեռուցման սենյակը, լվացատունը ավտոկանգառը:

28. Բունկերը պետք է լինի երկաթբետոնե պաշտպանված կառույց, որը պետք է հանդիսանա ինչպես թաքսոոց, այնպես նախատեսված լինի հակառակորդի հարձակման դեպքում երկար ժամանակահատվածում Կենտրոնի անխափան գործունեության ապահովելու համար:

29. Մուտքը բունկեր նախատեսված պետք է լինի շինության ներսից՝ երկկողմանի՝ աստիճանավանդակներով: Բունկերի դուրս նախատեսված պետք է լինեն ստորգետնյա պաշտպանված ելքեր դեպի բացօթյա ավտոկանգառներ (ՀԱԿ-երի հարևանությամբ), երկու քողարկված ելք՝ պարիսպի պարագծից դուրս, որից մեկը նախատեսվում է նաև տրանսպորտային միջոցների մոտեցման համար:

30. Բունկերը և նկուղային ամբողջ տարածքը պետք է ունենան պաշտպանված օդափոխման համակարգ, որը պետք է գրեթե ռեժիմներում՝ մաքուր օդափոխման (օդը մատուցվում է միայն արտաքին փոշուց մաքրված), զտող օդափոխման (օդը մատուցվում է զտող կլանիչներով մաքրվելուց հետո) և փակ օդափոխման (մատուցվում է վերարտադրված օդ):

- 31. Բունկերում պետք է նախատեսվեն հետևյալ աշխատանքային և օժանդակ տարածքները՝
  - 1) խորհրդակցությունների և իրավիճակային դահլիճ,
  - 2) Կենտրոնի պետի և տեղակալի աշխատասենյակ,
  - 3) ԿԱԿ պետի և տեղակալի աշխատասենյակ,
  - 4) Կենտրոնական ահազանգման կենտրոնի հերթապահության սենյակ,
  - 5) Դիսպետչերական ծառայությունների գործունեությունը համակարգող բաժնի (այսուհետ՝ ԴԾԳՀԲ) աշխատասենյակ,
  - 6) ավտոմատացված համակարգերի, ծրագրային և կապի ապահովման բաժնի (այսուհետ՝ ԱՀԾԱԲ) աշխատասենյակ,
  - 7) Հետախուզության և մոնիտորինգի բաժնի (այսուհետ՝ ՀՄԲ) աշխատասենյակ,
  - 8) կապի հանգույց,
  - 9) գեներատորների սենյակ,
  - 10) վարորդների սենյակ,
  - 11) պահեստ (սառնախցիկներով),
  - 12) մարտկոցների սենյակ,
  - 13) հանգստի սենյակներ (Վարչապետի, նախարարների, վարորդների),
  - 14) ճաշարան,
  - 15) բուժկետ,
  - 16) լողավազան,
  - 17) չորսական սանհանգույց և լոգարան:

**4.3. ՄԱԼՈՒԽԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ**

32. Կենտրոնի շինության առաջին երեք հարկերում՝ աշխատասենյակների և միջանցքների հատակային և առաստաղի հատվածում պետք է նախատեսվեն անհրաժեշտ խորության տարածություններ, որոնք պետք է ապահովվեն՝

- 1) մալուխային համակարգի նախագծում և մոնտաժ (ներքին համակարգչային ցանցի, ձայնային, տեսահամակարգի, ռադիոկապի, համացանցի, հոսանքի մատակարարման) այնպես, որպեսզի բացառվի դրանց ազդեցությունը միմյանց վրա,
- 2) շահագործման ժամանակ մալուխների անցումները տարածքներով, սենյակներով, անհրաժեշտ հատվածներում դրանց անվտանգ դուրսբերումը, տեղափոխումը հարկից հարկ, սենյակից սենյակ,
- 3) դրանց դյուրին տարատեսակումը՝ ըստ սպասարկման ուղղությունների և նշանակության,
- 4) առանց գործունեության դադարեցման մալուխների փոփոխում, ավելացում, վերանորոգում, տեղաշարժում և այլ

աշխատանքներ:

33. Մալուխները հրդեհից, խոնավությունից, մեխանիկական, այլ վնասող ազդեցություններից պաշտպանելու նպատակով ինչպես հատակային և առաստաղային, այնպես էլ աշխատանքային տարածքում պետք է անցկացվեն պաշտպանիչ խողովակաշարերով:

34. Աշխատանքային տարածքներում խողովակաշարերի մոնտաժման բարձրությունը հատակից (առաստաղից) պետք է ընտրվի տվյալ աշխատանքային տարածքի գործառնության առանձնահատկություններից ելնելով:

35. Բունկերում և նկուղային հարկի այլ աշխատանքային և օժանդակ տարածքներում մալուխային համակարգը պետք է անցկացվի պատերի և առաստաղի արտաքին մակերեսի վրայով՝ 2 մ ոչ ցածր բարձրության վրա:

36. Բոլոր մալուխները պետք է պիտակավորվեն այն սկզբունքով և այն պարբերությամբ (ըստ երկարության), որ դրանց վերանորոգման, փոփոխման, վերադասավորման ժամանակ ցանկացած հատվածում պարզ լինի դրանց նշանակությունը, սպասարկման ուղղությունը:

37. ՀԱԿ-երի, գեներատորների սենյակի, ՎՔՆ պահեստավորման և ՏՄ լիցքավորման կետի, պահեստի, ուղղաթիռի հարյուր տեսավերահսկման և արտաքին լուսավորման համակարգերի մալուխները պետք է անցկացվեն գետնի տակով՝ պաշտպանվել խողովակաշարերով՝ պարսպից 3-5 մ հեռավորության վրա, իսկ գետնի մակերեսային կատարվում է համապատասխան նշանադրում:

**V. ԷԼԵԿՏՐԱՄԱՍՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

38. Գեներոնը պետք է ունենա բազմակողմանի էլեկտրամատակարարում, որը պետք է ապահովի՝

1) ստացիոնար տրանսֆորմատորային հիմնական և պահեստային կայաններից. հիմնական էլեկտրամատակարարման անջատման դեպքում ավտոմատ պետք է միացվի պահեստայինը,

2) ավտոմատացված չորս գեներատորներից, որից երկուսը պետք է գտնվեն բունկերում. պետք է գործադրվեն հերթակախության՝ ըստ հզորության անհրաժեշտության՝ հիմնական և պահեստային կայաններից էլեկտրամատակարարման դադարեցման դեպքում,

3) մարտկոցային համակարգից. պետք է գործադրվի ստացիոնար և գեներատորներից ստացվող էլեկտրամատակարարման դադարեցման դեպքում՝ ապահովելով Գեներոնի շինության (բունկերի), ՀԱԿ-երի, գեներատորների սենյակի, պահեստի ներք լուսավորումը: Մարտկոցների լիցքավորումը պետք է իրականացվի ինչպես ստացիոնար, այնպես էլ գեներատորներից ստացվ հոսանքից,

4) Գեներոնի աշխատանքային սենյակներում և օժանդակ տարածքներում գործող սարքերի, սարքավորումների աշխատունակությունը վերոնշյալ համակարգերից էլ. մատակարարման դադարեցման դեպքում պետք է ապահովի պաշտպակարգավորող մարտկոցների (UPS, APC) հաշվին՝ առնվազն մեկ ժամվա հաշվարկով:

**VI. ԼՈՒՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

39. Գեներոնի, ինչպես նաև հարակից տարածքների լուսավորումը պետք է իրականացվի հիմնական և վթարային ռեժիմ

40. Խորհրդակցությունների, իրավիճակային դահլիճներում և հանդիսասրահում լուսավորման համակարգը պետք է ունենա պայծառության կարգավորման հնարավորություն, որը գործադրվում է տվյալ տարածքից:

41. Գեներոնի արտաքին լուսավորումը պետք է իրականացվի Գեներոնի շինության (պարսպից դեպի ներս) և պարսպի (պարսպից դեպի դուրս) պարագծով հաշվարկային բարձրության և հեռավորության վրա տեղադրված լապտերներով:

42. Հոսանքի ստացիոնար աղբյուրի առկայության պարագայում պետք է ապահովվի ողջ տարածքի (ավտոկայանատեղի ներառյալ) լուսավորում:

43. Ստացիոնար էլ. մատակարարման դադարեցման դեպքում, մինչ գեներատորների մեկնարկումը, լուսավորումը պետք է ապահովվի մարտկոցներից:

44. Վթարային լուսավորման լապտերները պետք է տեղադրվեն՝

1) Գեներոնի (բունկերի) միջանցքներում՝ պատերի աջ և ձախ հատվածներում՝ իրարից հաշվարկային հեռավորության հատակի և առաստաղի մոտ,

2) սենյակների և տարածքների մուտքի և ելքի բոլոր դռների վերնի հատվածում,

3) խորհրդակցությունների, իրավիճակային դահլիճներում, հանդիսասրահում, աշխատասենյակներում, ճաշասենյակում հանդերձարանում, մարզադահլիճում, լողավազանում, սանհանգույցներում, լոգարաններում, ՀԱԿ-երում և օժանդակ տարածքներում՝ առաստաղին՝ հաշվարկային հեռավորության վրա:

**VII. ՋՐԱՄԱՍՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

45. Գեներոնը պետք է ունենա շուրջօրյա՝ հիմնական և պահուստային՝ վթարային ջրամատակարարում:

46. Ջրամատակարարման համակարգը պետք է ընդգրկի շինության ջեռուցման համակարգը, ավտոմատ հրդեհաշիջման համակարգը, ճաշասենյակները, լվացատունը, սանհանգույցները, լոգարանները, լողավազանը և ստորգետնյա ավտոկանգա

47. Ջրամատակարարումը պետք է իրականացվի Գեներոնի տարածքում՝ հորի մեջ տեղակայված երկու տարողություն միջոցով (յուրաքանչյուրը 40 տոննա):

48. Հիմնական ջրամատակարարման դադարեցման դեպքում ջուրը պետք է մղվի Կենտրոն պոմպերի միջոցով: Երկարա ջրամատակարարման բացակայության դեպքում տարողությունները պետք է լիցքավորվեն արտաքին աղբյուրից:

49. Խմելու ջուրը պետք է մատակարարվի առանձին, պահեստավորվի անհրաժեշտ քանակությամբ:

50. Կենտրոնը պետք է ունենա ռոզման ջրի համակարգ:

**VIII. ՋԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

51. Կենտրոնում պետք է իրականացվի կենտրոնացված ջեռուցում գազի կաթսայի միջոցով, որը պետք է տեղակայված լի նկուղային հարկում:

52. Ջեռուցման համակարգը պետք է ընդգրկի շինության ողջ տարածքը, ՀԱԿ-երը և պետք է ունենա ըստ տարածքների (հարկերի, աշխատանքային սենյակների) ջերմաստիճանի կարգավորման հնարավորություն:

53. Գազամատակարարման դադարեցման դեպքում ջեռուցումը պետք է իրականացվի էլ. հոսանքով՝ աշխատանքային սենյակների հատակում մոնտաժված ջեռուցման համակարգի միջոցով:

**IX. ՕԴԱՓՈԽՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

54. Կենտրոնի օդափոխումը պետք է իրականացվի շինության ողջ տարածքում ավտոմատացված սկզբունքով և առանձի տեղադրված օդակարգավորման համակարգերի շտրիփով՝ անհատական միկրոկլիմայի կարգավորման հնարավորությամբ (դահլիճներում, հանդիսասրահում, ԿԱԿ-ի հերթապահ մասում, աշխատանքային սենյակներում):

**X. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

55. Կենտրոնի անվտանգության համակարգում պետք է ներառվեն՝

- 1) Կենտրոնի տեսավերահսկման համակարգը,
- 2) տվյալների վերլուծման և պահպանման համակարգը,
- 3) ստացիոնար և դյուրակիր մետաղափնտրիչ սարքերը,
- 4) հրդեհաշիջման և հրդեհային տագնապի ավտոմատ համակարգերը,
- 5) մուտքի (ելքի) քարտային վերահսկման համակարգը,
- 6) պաշտպանիչ ազդանշանային համակարգը,
- 7) իրազեկման և տարահանման կառավարման համակարգը:

56. Կենտրոնի շինության և տարածքի տեսավերահսկումը կառավարվում է անվտանգության ապահովման սենյակներից, պարսպից դուրս՝ ՀԱԿ-երից:

57. Շինության ներսում տեսախցիկների միջոցով պետք է վերահսկվեն բոլոր միջանցքները, լոդավազանը, մարզադահլիճ՝ հերթապահության սենյակը, կապի հանգույցը, հանդերձարանը, ջրաջեռուցման սենյակը, ստորգետնյա ավտոկանգառը, իսկ Կենտրոնի տարածքում՝ ՀԱԿ-երը, գեներատորների կետը, ՎՔՆ պահեստավորման և ՏՄ լիցքավորման կետը և պարսպից նե ընկած տարածքը:

58. Պարսպից դուրս պետք է վերահսկվեն ավտոկանգառը, դեպի ավտոկանգառ մոտեցումը և պարսպի հարակից տարած մինչև 20 մ հեռավորության վրա:

59. Արտաքին տեսավերահսկում իրականացնող սարքերը պետք է հագեցած լինեն գիշերային տեսունակությամբ, տեսա հեռակառավարման հնարավորությամբ և պետք է ապահովեն տեսանելիության բարձր որակ:

60. Տեսավերահսկման համակարգի մալուխները պետք է մոնտաժվեն այնպես, որ պաշտպանված լինեն արտաքին ազդեցությունից:

61. Տվյալների վերլուծման և պահպանման համակարգը պետք է գտնվի անվտանգության ապահովման սենյակում և ապա տեսավերահսկման համակարգի աշխատանքը, շուրջօրյա տեսաձայնագրումը, ինչպես նաև մուտքի (ելքի) քարտային համալ հրդեհաշիջման, հրդեհային տագնապի համակարգերի, պաշտպանիչ ազդանշանային համակարգի, իրազեկման և տարահալ կառավարման համակարգի վերահսկումը:

62. Մուտքի (ելքի) վերահսկման համակարգը պետք է տեղադրվի համապատասխան տարածքների, վերելակի, հարկերի և դռներին և ապահովի մուտքի թույլտվություն շինության տարբեր մակարդակներ, տարածքներ տարատեսակված քարտերի մ որոնց կիրառումը պետք է վերահսկվի համակարգչային ծրագրով:

63. Իրազեկման և տարահանման կազմակերպման համակարգը պետք է նախատեսված լինի Կենտրոնի ամբողջ տարած անձնակազմի իրազեկման, իսկ շինության ներսում՝ նաև անվտանգ և արագ տարահանման գործընթացների իրականացման համար:

64. Շինության ներսում (դրսում գտնվող աշխատանքային տարածքներում) իրազեկումը պետք է իրականացվի առատա մոնտաժված բարձրախոսների միջոցով, որոնք պետք է տեղադրվեն բոլոր հարկերում՝ տարածքներում և սենյակներում (ներս բունկերը) հաշվարկային հեռավորության վրա և պետք է կառավարվեն անվտանգության սենյակից:

65. Իրազեկման համակարգը պետք է գործադրվի ինչպես ընդհանուր՝ միաժամանակ ներառելով բոլոր բարձրախոսները այնպես էլ առանձին տարածքներով:

66. Տարահանման կազմակերպման համակարգը պետք է գործի Կենտրոնի շինությունում՝ միջանցքի պատերին,



աստիճանավանդակներում, մուտքի (ելքի) դռներին տեղադրված լուսային տեղեկացման սարքերի միջոցով՝ իրազեկման համակարգի ուղղորդմամբ:

**XI. ԿԱՊԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

67. Կենտրոնի կապի համակարգը պետք է ներառի՝

- 1) կենտրոնացված ազդարարման համակարգը,
- 2) կարճալիք և գերկարճալիք ռադիոկապը,
- 3) ուղիղ հեռախոսային կապը,
- 4) ստացիոնար հեռախոսակապը,
- 5) ֆաքսիմիլային կապը,
- 6) արբանյակային կապը,
- 7) տեսաձայնային կապը,
- 8) ներքին հեռախոսակապը,
- 9) համացանցը,
- 10) ներքին ցանցը,
- 11) բարձրաձայնային կապը:

**XII. ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՍՏԻՔԱՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

68. Ղեկավարություն: Կենտրոնի ղեկավարությունը և վարչական ապարատը պետք է կազմված լինի հետևյալ հաստիքայ պաշտոններով՝

- 1) Կենտրոնի պետ - 1,
- 2) Կենտրոնի պետի տեղակալ օպերատիվ կառավարման գծով - 1,
- 3) Կենտրոնի պետի տեղակալ տեղեկատվական և տեխնիկական ապահովման գծով -1,
- 4) Բժիշկ - 1,
- 5) Հաշվապահ (զանձապահ) - 1,
- 6) Գործավար - 3,
- 7) Վարորդ - 1:

69. Օպերատիվ հերթափոխեր: Օպերատիվ հերթափոխերում պետք է լինեն՝

- 1) Հերթափոխի պետ - 5,
- 2) Օպերատիվ հերթապահ - 12,
- 3) Տեխնիկ կապի գծով - 5,
- 4) Վարորդ - 5:

70. Ավտոմատացված համակարգերի ծրագրային և կապի ապահովման բաժին: Բաժնի կազմը պետք է բաղկացած լինի՝

- 1) Բաժնի պետ - 1,
- 2) Ավագ մասնագետ ԱՀ գծով - 1,
- 3) Ավագ մասնագետ ԾԱ գծով - 1,
- 4) Ավագ մասնագետ կապի գծով - 1,
- 5) Մասնագետ ԱՀ գծով - 2,
- 6) Մասնագետ ԾՀ գծով - 2,
- 7) Մասնագետ կապի գծով - 2,
- 8) Համակարգչային օպերատոր - 3:

71. Հեռախոսության և մոնիտորինգի բաժին: Բաժնի կազմը պետք է բաղկացած լինի՝

- 1) Բաժնի պետ - 1,
- 2) Ավագ հրահանգիչ - 2,
- 3) Հրահանգիչ - 3:

72. Դիսպետչերական ծառայությունների գործունեությունը համակարգող բաժին: Բաժնի կազմը պետք է բաղկացած լինի՝

- 1) Բաժնի պետ - 1,
- 2) Ավագ հրահանգիչ - 2,
- 3) Հրահանգիչ - 3:

73. Վերլուծական և վիճակագրության բաժին: Բաժնի կազմը պետք է բաղկացած լինի՝

- 1) Բաժնի պետ - 1,
- 2) Գլխավոր մասնագետ - 1,
- 3) Համակարգչային օպերատոր - 3:

74. Անվտանգության ապահովման բաժին: Բաժնի կազմը պետք է բաղկացած լինի՝

- 1) Բաժնի պետ - 1,
- 2) Պահպանության ավագ սպա - 5,

3) Պահպանության սպա - 12:

75. Տեխնիկական և սպասարկման բաժին: Բաժնի կազմը պետք է բաղկացած լինի՝

- 1) Բաժնի պետ - 1,
- 2) Պարետ - 1,
- 3) Դիզելիստ-լիցքավորող - 1,
- 4) Պահեստապետ - 1,
- 5) Լվացարարուհի - 1,
- 6) Հավաքարար - 3,
- 7) Խոհարար - 2,
- 8) Բուժետապան - 1:

76. Այսպիսով նորաստեղծ Կենտրոնի համար անհրաժեշտ է 95 հաստիք, որից՝ 66 փրկարարական ծառայող, 2 քաղաքացիական աշխատող, 27 տեխնիկական սպասարկում իրականացնող:

77. Ներկայումս Հայաստանի փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման կենտրոնում առկա է 50 հաստիք, ոչ ներառվելու է նորաստեղծ Կենտրոնում:

78. Այսպիսով անհրաժեշտ կլինի լրացուցիչ 45 հաստիք, որոնց պահպանման համար ամսական անհրաժեշտ կլինի ևս 3 ԸՀ դրամ գումար:

**XIII. ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵ ՀԱՇՎԱՐԿ**

79. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման կենտրոնի համար անհրաժեշտ գույքի ծախսերի հաշվարկն է՝

Հ/հ	Անվանումը	Քանակը, հատ	1 հատի արժեքը	Արժեքը, ՀՀԴ	Արժեքը, ԱՄՆԴ
1	Սեղան նիստերի (50 անձի համար)	1	2 000 000	2 000 000	5405,4
2	Սեղան նիստերի (30 անձի համար)	1	1 200 000	1 200 000	3243,2
3	Սեղան (ղեկավարի)	22	120 000	2 640 000	7135,1
4	Սեղան աշխատանքային	134	149 000	19 966 000	53962,2
5	Սեղան դիսպետչերի	29	110 000	3 190 000	8621,6
6	Սեղան համակարգչի	5	50 000	250 000	675,7
7	Սեղան ճաշի	30	20 000	600 000	1621,6
8	Աթոռ փափուկ (մեծ)	110	70 000	7 700 000	20810,8
9	Աթոռ փափուկ	370	20 000	7 400 000	20000,0
10	Աթոռ շարժական դեկավարի	37	20 000	740 000	2000,0
11	Աթոռ շարժական	53	70 000	3 710 000	10027,0

12	Պահարան հագուստի (հանդերձարանի)	70	50000	3 500 000	9459,5
13	Պահարան հագուստի	63	140000	8 820 000	23837,8
14	Պահարան չիրկիզվող	58	150000	8 700 000	23513,5
15	Պահարան մետաղական (փաստաթղթերի)	41	125000	5 125 000	13851,4
16	Պահարան գրքերի	64	100000	6 400 000	17297,3
17	Մահճակալ	97	60000	5 820 000	15729,7
18	Բազկաթոռ	15	148000	2 220 000	6000,0
19	Բազմոց	8	370000	2 960 000	8000,0
20	Օդորակիչ մեծ (դահլիճների)	8	750 000	6 000 000	16216,2
21	Օդորակիչ	59	520 000	30 680 000	82918,9
22	Սառնարան (սառնախցիկ-480լ)	6	270 000	1 620 000	4378,4
23	Սառնարան մեծ (510լ)	8	485 000	3 880 000	10486,5
24	Սառնարան փոքր (աշխատասենյակի)	44	120 000	5 280 000	14270,3
25	Լվացքի մեքենա	3	300 000	900 000	2432,4
26	Չորացման մեքենա	3	185 000	555 000	1500,0
27	Լոգարան (լրակազմ)	54	1 000 000	54 000 000	145945,9
28	Սան.հանգույց (լրակազմ)	70	500 000	35 000 000	94594,6
Ընդամենը				<b>230 856 000</b>	<b>623935,1</b>

80. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման կենտրոն կապի միջոցների ձեռքբերման ծախսերի հաշվարկն է՝

Հ/հ	Անվանումը	Քանակը, հատ	1 հատի արժեքը	Արժեքը, ՀՀԴ	Արժեքը, ԱՄՆԴ

1	Ներքին ԱՀԿ	2	4 000 000	8 000 000	21621,6
2	Հեռախոս ներքին	164	6 000	984 000	2659,5
3	Հեռախոս քաղաքային	21	13 000	273 000	737,8
4	Հեռախոս բազմաֆունկցիոնալ (դիսպետչերի)	112	60 000	6 720 000	18162,2
5	Ռադիոկայան ԳԿԱ (ստացիոնար, լրակազմ)	26	555 000	14 430 000	39000,0
6	Ռադիոկայան ԿԱ (ստացիոնար, լրակազմ)	3	1 850 000	5 550 000	15000,0
7	Ֆաքս	15	53 000	795 000	2148,6
8	Ռադիոկայան դյուրակիր ԳԿԱ	40	120 000	4 800 000	12973,0
9	Արբանյակային կապ	2	1 904 000	3 808 000	10291,9
<b>Ընդամենը</b>				<b>45 360 000</b>	<b>122594,6</b>

81. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման կենտրոնի կառավարման համար անհրաժեշտ համակարգչային տեխնիկայի, սարքերի և սարքավորումների ծախսերի հաշվարկն է՝

Հ/հ	Անվանումը	Քանակը, հատ	1 հատի արժեքը	Արժեքը, ՀՀԴ	Արժեքը, ԱՄՆԴ
1	Համակարգիչ դյուրակիր (սիս. ծրագր. փաթեթ)	61	740 000	45 140 000	122000,0
2	Համակարգիչ (սիստ. ծրագր. փաթեթ)	101	1 000 000	101 000 000	272973,0
3	Մոնիտոր 19'	65	104 000	6 760 000	18270,3
4	Մոնիտոր 22'	85	130 000	11 050 000	29864,9
5	Սերվեր (սիստ. ծրագր. փաթեթ)	9	4 575 000	41 175 000	111283,8
6	UPS (պաշտպանիչ մարտկոց)	103	70 000	7 210 000	19486,5
7	Տպիչ լազերային (Ա-4 ֆորմատի)	31	80 000	2 480 000	6702,7
8	Տպիչ լազերային (Ա-3 ֆորմատի)	6	120 000	720 000	1945,9

9	Սքաներ (A 2 ֆորմատ)	2	200 000	400 000	1081,1
10	Սքաներ (A 3 ֆորմատ)	2	120 000	240 000	648,6
11	Մոնիտոր մեծ (սպառի)	20	2 250 000	45 000 000	121621,6
12	ԴՎԴ	31	55 000	1 705 000	4608,1
13	ԴՎԴ՝ ձայնագրման հնարավորությամբ	2	150 000	300 000	810,8
14	Տեսախցիկ թվային	4	600 000	2 400 000	6486,5
15	Հեռուստացույց մեծ	6	600 000	3 600 000	9729,7
16	Հեռուստացույց 54սմ	40	130 000	5 200 000	14054,1
17	Արբանյակային համակարգ	7	250 000	1 750 000	4729,7
18	Էլեկտրոնային պրոյեկտոր	5	600 000	3 000 000	8108,1
19	Ֆոտոսպարատ թվային	1	200 000	200 000	540,5
20	Անհատական կողմնորոշման ընդունիչ (GPS)	4	190 000	760 000	2054,1
21	Նավիգացիոն համակարգ (GARMIN GPSMAP-620)	4	320 000	1 280 000	3459,5
22	Միկրոֆոն նիստերի (լրակազմ 55 տեղի համար)	1	1 500 000	1 500 000	4054,1
23	Միկրոֆոն նիստերի (լրակազմ 5 տեղի համար)	1	140 000	140 000	378,4
24	Ստացիոնար մետաղափնտրիչ սարք	2	1 800 000	3 600 000	9729,7
25	Դյուրակիր մետաղափնտրիչ սարքերը	2	100 000	200 000	540,5
Ընդամենը				<b>283 010 000</b>	<b>764891,9</b>

82. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման կենտրոնի տրանսպորտային միջոցների ձեռքբերման ծախսերի հաշվարկն է՝

Հ/հ	Անվանումը	Քանակը, հատ	1 հատի արժեքը	Արժեքը, ՀՀԴ	Արժեքը, ԱՄՆԴ

1	Ավտոմեքենա (բարձր անցողության)	4	18 000 000	72 000 000	194594,6
2	Միկրոավտոբուս	2	12 000 000	24 000 000	64864,9
3	Ավտոմեքենա (ծառայող., մարդաստար)	4	10 000 000	40 000 000	108108,1
4	Ուղղաթիռ (MD-600N)	1	925 000 000	925 000 000	2500000,0
5	Ձնագնաց	2	3 330 000	6 660 000	18000,0
6	Ջրագնաց	2	3 700 000	7 400 000	20000,0
7	ՀՇՄ	2	36 000 000	72 000 000	194594,6
8	Հոսանքի գեներատոր	4	2 000 000	8 000 000	21621,6
9	Հոսանքի գեներատոր (շարժ., փոքր, 4կՎտ)	4	510 000	2 040 000	5513,5
<b>Ընդամենը</b>				<b>1 157 100 000</b>	<b>3127297,3</b>

83. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման կենտրոն սպասարկման համակարգերի ծախսերի հաշվարկն է՝

Հ/հ	Անվանումը	Քանակը	Չափման միավորը	Ընդամենը, քմ	1 միավորի արժեքը, ՀՀԴ	Ընդհանուր արժեքը, ՀՀԴ	Ընդհանուր արժեքը,
1	Տեսավերահսկման համակարգ	1	քմ	15 000	14 800	222 000 000	60000
2	Հրդեհաշիջման և հրդեհային տագնապի ավտոմատ համակարգեր	1	քմ	6 000	14 800	88 800 000	24000
3	Օդափոխության և ջերմակարգավորման համակարգ	1	քմ	4 000	112 000	448 000 000	12108
<b>Ընդամենը</b>						<b>758 800 000</b>	<b>20508</b>

84. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման կենտրոն շինարարական ծախսերի հաշվարկն է՝

Հ/հ	Անվանումը	Քանակը	Չափման միավորը	Ընդամենը	Միավորի արժեքը, ՀՀԴ	Արժեքը, ՀՀԴ	Արժեքը, Լ
1	Շինության նկուղային հարկերը	2	քմ	2 000	185 000	370 000 000	100000

2	Շինության հարկերը	4	քմ	4 000	148 000	592 000 000	160000
3	Շինության արտաքին կառույցները	5	քմ	300	40 000	12 000 000	32432
4	Պարիսպ 2*(90*130)	1	գմ	440	18 500	8 140 000	22000
5	Մետաղացանց (15*90*15)	1	գմ	120	12 000	1 440 000	3891
6	Ուղղաթիռի հարթակ	1	քմ	150	7 000	1 050 000	2837
7	Ասֆալտապատում	1	քմ	3 000	5 000	15 000 000	40540
Ընդամենը						<b>999 630 000</b>	<b>270170</b>

85. Այսպիսով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման կենտրոնի ստեղծման համար անհրաժեշտ է 5 324 756 000 ՀՀ դրամ (14 391 232 ԱՄՆ դոլար) հետևյալ հաշվարկով՝

Հ/հ	Անվանումը	Արժեքը, ՀՀԴ	Արժեքը, ԱՄՆԴ
1	Ընդամենը գույքի համար	230 856 000	623 935
2	Ընդամենը ՀՏ, ՍՍ համար	283 010 000	764 892
3	Ընդամենը ՏՄ և ՍՍ համար	1 157 100 000	3 127 297
4	Ընդամենը շինության կառուցման համար	999 630 000	2 701 703
5	Ընդամենը կապի գույքի համար	45 360 000	122 595
6	Սպասարկման համակարգերի համար	758 800 000	2 050 811
7	Ծրագրային ապահովում	1 850 000 000	5 000 000
Ընդամենը		<b>5 324 756 000</b>	<b>14 391 232</b>

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար**

**Դ. Սա**

